

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԵՎ ԾԻՍԵՐԳԱՅԻՆ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կուտակային¹ (կումուլյատիվ) հեքիաթը հայկական բանահյուսության՝ մինչ օրս քիչ ուսումնասիրված տեսակներից է: Որպես հեքիաթի ենթաժանր՝ կուտակային հեքիաթները առանձնացվում են ըստ դիպաշարերի ոչ թե բովանդակային, այլ կառուցվածքային հատկանիշների: Ելակետը որոշակի կայուն կրկնություններով կուտակվող հյուսվածքն է, որը սյուժեի յուրաքանչյուր օղակում նոր բաղադրիչ է ներառում: Կուտակային նույնաբնույթ կառուցվածք հատուկ է նաև ժողովրդական ծիսերգերի չափածո որոշ կառույցների, որոնցում մոտիվային կրկնությունները հուշում են ծագումնաբանական ընդհանրությունների մասին:

Հնդվածում միջտեքստային քննության են ենթարկվում մի շարք կուտակային հյուսվածքներ՝ հեքիաթներ ու երգեր, ինչպես նաև՝ Հովհ. Թումանյանի մշակված և փոխադրած կուտակային հյուսվածքների բարձրարվեստ մշակումները՝ համադրելով դրանք ժողովրդական տարբերակների և ծիսերգային բանահյուսության այլ նմուշների հետ: Դիտարկվում է կուտակային շղթայի զարգացման տրամաբանությունը՝ ծննդի և մահվան, արարման և քայքայման հաջորդական օղակներով, շղթայի ձևավորման տրամաբանությունը՝ ելնելով կենսանորոգման և կենսապտույտի տրամաբանությունից, որն առանցքային է նաև ամանորյա և հարսանեկան ծիսական բանահյուսության համար: Սրանով էլ պայմանավորվում է կուտակային հեքիաթների ծագումնաբանական ընդհանրությունը բարեկենդանյան ու հարսանեկան ծիսական բնագրերի հետ, և հասկանալի է դառնում հարսի, փեսայի և պսակի մոտիվների առատությունը քննարկվող կուտակային կառույցներում:

Բանալի բառեր - կուտակային հեքիաթ, ծիսերգ, «Էս էն է», «Գացեք-տեսեք», «Ծիտր», «Պոչատ աղվեսը», «Հեքիաթ-հեքիաթ պապս», շղթայական կառույց, արարում, ոչնչացում, հարս ու փեսա

Կուտակային հեքիաթները² երեխաների ամենասիրելի ժանրերից են, որոնք, հետաքրքիր, արկածային պատումներ լինելուց բացի, նաև

¹ **Կուտակային հեքիաթը** այլ կերպ կարող է անվանվել նաև **շղթայական հեքիաթ** (ռուս. *цепевидная сказка*)՝ նկատի ունենալով պատումի շղթայական բնույթը: Մեզ համար ավելի ընդունելի է կուտակային տարբերակը, քանի որ այստեղ շեշտադրվում է նաև պատումի որոշակի կուտակումներով զարգացող սյուժեն (յուրաքանչյուր նոր օղակում մինչ այդ հյուսված կուտակային բնագիրը ավելանում է ևս մեկ բաղադրիչով, որ հարստացնում է կուտակային արձակ կամ չափածո հյուսվածքը հաջորդ կրկնության ժամանակ), որն այս տիպի դիպաշարերի գլխավոր հատկանիշն է:

² Կուտակային հեքիաթներն Աարնե-Թոմփսոն-Ութերի միջազգային նշացանկում դասակարգված են 2000-2100 թվահամարների ներքո: Տե՛ս **Hans-Jörg Uther**, *The Types of International Folktales. A Classification and Bibliography*, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2004, 3 volumes: FF Communications 284; 285; 286:

շատ կարևոր դեր են կատարում երեխաների հիշողության և խոսքի զարգացման հարցում: Որոշակի կրկնություն-կուտակումներով հյուսվող դիպաշարը պատումի՛ն հաղորդում է գրավչություն, թեթևություն, արկածայնություն, որոշ դեպքերում նաև՝ երգիծական բնույթ, իսկ դիպաշարի մեջ հյուսվող պատումի կրկնությունը՝ յուրաքանչյուր նոր բաղադրիչի ավելացման ժամանակ, նպաստում է կուտակվող շղթայի օղակների հաջորդականությունը մտապահելով վերականգնելու հմտությանը, որի շնորհիվ զարգանում են նաև երեխայի հիշողությունն ու տրամաբանությունը: Կուտակային հեքիաթների ամենից բնորոշ և տարածված օրինակներից են «Գնդիկ-բոքոնիկը», «Շաղգամը» և մի շարք այլ նմանատիպ դիպաշարեր, որոնք սովորաբար կրտսեր տարիքի երեխաներին պատմվող առաջին հեքիաթներից են:

Հայ ժողովրդական հեքիաթները հարուստ են կուտակային դիպաշարերով: Դրանց մի մասը լայն ճանաչում են ձեռք բերել Թումանյանի հիանալի մշակումների շնորհիվ: Ժողովրդական կուտակային հեքիաթների հիմքով ստեղծված արձակ և չափածո ստեղծագործությունները Հովհ. Թումանյանի երկացանկում կրտսեր տարիքի երեխաների սիրելի պատումների թվում են: Այդպիսիք են, օրինակ, «Կիկոսի մահը», «Ծիտը»³, «Պոչատ աղվեսը» հյուսվածքները, որոնցում խոսքի և գործողության կրկնությունները աստիճանական կուտակումներով ստեղծում են պատումի շղթայական մի շրջանակ:

Կուտակային հեքիաթները սովորաբար հեքիաթի մյուս տեսակներից առանձնանում են իրենց կառուցվածքով, սակայն բովանդակությամբ կարող են շատ տարբեր լինել: Ռուս հայտնի հեքիաթագետ Վլադիմիր Պրոպյան առանձնացնում է կուտակային հեքիաթների 11 տիպ: Ըստ այդմ՝ շղթայական պյուժեն կարող է առաջանալ մեկը մեկի հետևից ուղարկվող կերպարներով (ինչպես, օրինակ, «Կիկոսի մահը» հեքիաթում), փոխանակությունների շղթայով (ինչպես, օրինակ, «Ծիտը» հեքիաթում), կերակրման շղթայով, ձեռքբերումների, հերթով խրճիթ հրավիրվելու, չնչին բանի համար իրենք իրենց կոտորելու (ինչպես, օրինակ, «Մուկիկի մահը» երկում) և այլ ճանապարհներով⁴:

Կուտակային հեքիաթների այս թվում է շատ պարզ և հաճախ բառախաղ հիշեցնող պատումները զարմանալիորեն հեքիաթի ժանրաձևում վաղազույններից են և սնվում են հնագույն ծիսապաշտամունքային աշխարհից, ուր կրկնությունը խոսքի պաշտամունքայնությունը և հմայականությունը շեշտադրելու հիմնական միջոցն էր⁵, որտեղ աշ-

³ Պատահական չէ, որ Թումանյանի «Ծիտը» հեքիաթը արդեն երկար տարիներ տեղ է գտնում դպրոցականների առաջին դասարանի «Մայրենի»-ի դասագրքերում և շատ օգնում է երեխաների խոսքի ու հիշողության զարգացմանը:

⁴ Տե՛ս **Ս. Պրոպ. В. Я.** Кумулятивная сказка // Фольклор и действительность, СПб., «Азбука», 2021, էջ 331-354:

⁵ Տե՛ս **Ռ. Հ. Խաչատրյան**, Կրկնակների ու կրկնությունների գործառույթը ծիսերգերում // Պատմա-բանասիրական հանդես, 1991, № 2, էջ 123:

խարհը՝ առարկաները, բնությունը, կենդանական, թռչնային և մարդկային ուղորտները, մեկը մյուսով սնվող կամ մեկը մյուսին գոհաբերվող, մեկը մյուսով պայմանավորված մի համակարգ էր դիտվում՝ կյանքմահ շղթայի հաջորդական օղակներով, փոխանակում-ընծայաբերմամբ կյանքի ու աշխարհի հավասարակշռությունն ապահովող:

Ասվածի տրամաբանությամբ փորձենք միջտեքստային քննության ենթարկել կուտակային մի քանի հեքիաթների դիպաշարեր հայ և անգլիական բանահյուսությունից՝ գրական մշակումների և ժողովրդական տարբերակների դիտարկմամբ զուգադրելով դրանք ծիսերգային բանահյուսության և ժողովրդական չափածոյի կուտակային բնույթի հյուսվածքներին:

Վնասման կամ ոչնչացման շղթա. «Էս էն է», «Գացեք-տեսեք»

Հովհ. Թումանյանի ստեղծագործական աշխարհում կա մի շատ ուշագրավ չափածո գործ՝ «Էս էն է», որը անգլիական ժողովրդական հայտնի կուտակային մանկական չափածո երգային հեքիաթի փոխադրություն է՝ «Սա այն տունն է, որ կառուցել է Ջեքը» վերնագրով: Սյուժեի ժողովրդական սկզբնադրյուրը տեղ է գտել ինչպես հեքիաթների նշացանկում⁶, այնպես էլ ժողովրդական երգերի շարքում: Թումանյանը, իհարկե, հայացրել է հայտնի անգլիացի Ջեքին և ներկայացրել որպես վարպետ Օհան:

«Էս էն է» ստեղծագործությունը սկսվում է վարպետ Օհանի կառուցած տնից և այդ տան մեջ պահվող ցորենից: Բերենք մի հատված.

1

Էս էն տունն է, որ շինել է վարպետ Օհանը:

2

Էս էն ցորենն է, որ պահած է էն տանը,

Որ շինել է վարպետ Օհանը:

3

Էս էն մուկն է, որ կերել է էն ցորենը,

Որ պահած է էն տանը,

Որ շինել է վարպետ Օհանը:

4

Էս էն կատուն է, որ բռնել է էն մկանը,

Որ կերել է էն ցորենը,

Որ պահած է էն տանը,

Որ շինել է վարպետ Օհանը⁷:

Կուտակային հյուսվածքը շարունակվում է մեկը մյուսին հաջորդող մոտիվներով. ցորեն, որ կերել է մուկը, կատու, որ բռնել է մկանը,

⁶ Տե՛ս ATU 2032 «This Is the House That Jack Built»: Տե՛ս **Hans-Jörg Uther**, The Types of International Folktales:

⁷ **Հովհ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Եր., Հայաստանի ԳԱ հրատ., 1990, էջ 304-306:

շուն, որ գգել է կատվին, կով, որ հարու է տվել շանը, աղջիկ, որ կթել է կովին, տղա, որ ամուսնացել է աղջկա հետ, տերտեր, որ պսակել է տղային, աքլոր, որ արթնացրել է տերտերին, Վարպետ Օհան, որ մորթել է աքլորին:

Ինչպես տեսնում ենք, հաջորդական այս շղթան հիմնականում կապվում է մեկը մյուսով սնվող, մեկը մյուսին վնասող հերթական օղակներով: Այս շղթայում առանձնանում են ամուսնացող աղջկա ու տղայի և նրանց պսակող տերտերի կերպարները (*«...աղջիկ, որ կթել է էն կովը... / ...տղա, որ ուզել է էն աղջկան... / ...տերտեր, որ պսակել է էն տղին...»*⁸), սակայն սրան կանդրադառնանք մի փոքր ուշ:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրողները, մանկական այս երգը ամենին սովորական կենցաղային հյուսվածք չէ, այլ եղել է ծիսական երգ: Այն ծագել է հրեական հիմնից՝ «Չաղ Գաղյա» Սեփեր Հազադայում, որն ունի իր դանիական, անգլիական տարբերակները⁹: Ստեղծագործության ժողովրդական տարբերակը՝ «Մի մատղաշ այծ»¹⁰, շատ մոտ է հայկական բարեկենդանյան կուտակային կառուցվածքով նոխազերգությանը (այծերգությանը)՝ «Գացեք-տեսեք» վերնագրով, որը ևս ծիսական բնույթ է կրել (*Գացեք-տեսեք ով է կերել էձը, / Գացին տեսան գելն է կերել էձը...*): Սովորաբար կուտակային բնագրերով այսպիսի ծիսերգերը կատարվել են Ամանորին՝ «տիեզերական ծառի» մոտ¹¹: «Գացեք-տեսեք» ծիսերգը ազգագրագետներ Սրբուհի Լիսիցյանը և Էմմա Պետրոսյանը կապում են Սպանդարամետի տոների հետ¹², որն աղերսվում էր անդրաշխարհի, մահվան գաղափարին¹³: Ըստ Սրբուհի Լիսիցյանի՝ «նախապես սա եղել է երգ, որը երգվել է այժի գոհաբերության ժամանակ: Այս երգը երգել է երգչախումբը՝ պարելով պտտվելով գոհասեղանի առջև՝ Դիոնիսոսի՝ հայկական Սպանդարամետի տոնի ժամանակ»¹⁴: Ըստ Էմմա Պետրոսյանի՝ նոխազերգության հիմքում ընկած է ծիսական կերակրման գաղափարը: Բանագետ Ռախսա Խաչատրյանը հիշյալ երգի առնչությամբ գրում է. «Ավարտ — սկիզբ երկշարային ծավալման այս հաջորդությունը՝ մեկը մյուսին ուտելու, ոչնչացնելու հերթագայությամբ գայլ/այծ, այծ/թուփ, ժանգ/թվանք, յուղ/ժանգ, կատու/մուկ, այլ տարբերակներում գայլ/այծ, այծ/թուփ, ջուր/ուրթ, արագիլ/օձ, օձ/հող, հող/խսան բառային սեղմ արտահայտություններով ու

⁸ Նույն տեղում:

⁹ St u Halliwell-Phillipps J. O., **Popular Rhymes and Nursery Tales: A Sequel to the Nursery Rhymes of England**, London, 1849, էջ 6:

¹⁰ St u նույն տեղը:

¹¹ St u **Петросян Э.** Боги и ритуалы древней Армении, Ер., 2004, էջ 71:

¹² St u **Лисицян С.** Старинные армянские пляски и театральные представления, т. 1, изд. Академия наук Армянской ССР, Ер., 1958, էջ 79; **Է. Պետրոսյան**, «Գացեք տեսեք» պարերգի իմաստաբանությունը, ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Եր., 1982, էջ 12:

¹³ St u **Ռ. Հ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 129:

¹⁴ **Лисицян С.** Старинные пляски и театральные представления армянского народа, т. 1, с. 79.

կառուցվածքի ռեչիտատիվ բնույթով, բացահայտ նշում են կրկնակի ծիսակատարողական արժեքը, որն անպայմանորեն նախանշում էր հակիրճ այդ իրողությունների ընդհանուր իմաստաբանությունը՝ ծնունդ—մահ—ծնունդ»¹⁵.

Հուղն էր իսնին
Իսան՝ յըղին,
Յողն էր ժանգին,
Ժանգն էր թրին,
Թուրն էր կիլուն,
Կելն էր իձուն,
Էձն էր թփին,
Թուփն էր իգուն,
Իգուն դիրուն,
քոլ բարի, քոլ բարի, քոլ բարի, քոլ¹⁶:

Ուշագրավ է, որ «Գացեք-տեսեք» նոխազերգության տարբերակներում սննդային այս շղթայում դարձյալ ի հայտ են գալիս հարսի և փեսայի կերպարները¹⁷: Այսպիսի օրինակ մենք տեսնում ենք ծիսերգի Տավուշից գրառված տարբերակում.

Քյնցեք տեսեք ո՞վ է տարել կատուն,
Քյնցինք տեսանք հարսն է տարել կատուն:
Հարսն ու կատուն, կատուն ու կուկը,
Մուկն ու յուղը, յուղն ու ժանգը,
Ժանգն ու սուրը, սուրն ու գայլը,
Գայլն ու այծը, այծն ու այգին
Մեզ պնրիզենթան, ծեզ պնրի գատիկ¹⁸:

Կուտակման հաջորդ օղակում հիշվում է նաև փեսան («Քյնցեք տեսեք ո՞վ է տարել հարսին, / Քյսցինք տեսանք փեսեն է տարել հարսին»): Իսկ ահա փեսային տարել է Աստված («Քյնցեք տեսեք ո՞վ է տարել փեսին, / Քյնցինք տեսանք աստո՞ծ է տարել փեսին»¹⁹):

Կատվին հարսն է տարել, հարսին փեսան է տարել, փեսային աստված է տարել... Կյանք-մահ հաջորդական այս օղակներում փեսան ակնհայտորեն զոհի իմաստաբանությամբ է հանդես գալիս: Փեսան հարսանիքի համատեքստում կյանքի շարունակականությունն ապահովող այն զոհն է (հմմտ. Փեսա-Քրիստոս նույնացումը սրբազան ամուսնության համատեքստում), որի սիմվոլիկ զոհաբերումը պետք է ապահովի կյանքի շարունակականությունը, նոր աճն ու պտղավորու-

¹⁵ Ռ. Հ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 129:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Ծիսերգում տարեպտույտի խորհրդանշական-գեղագիտական արտահայտումների մասին ուշագրավ քննություն է կատարել Լիլիթ Սիմոնյանը: Տե՛ս Լ. Սիմոնյան-Մելիքյան, Տոմարային ծիսաշար, հ. 2, Եր., 2007, էջ 173-215:

¹⁸ Է. Խենյան, Տավուշ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, Եր., 2000, էջ 214-215:

¹⁹ Նույն տեղում:

մը²⁰, որն էլ հարսանիքի առանցքային գաղափարն է:

Արարման և ձեռքբերումների շղթա. «Պոչատ աղվեսը», «Հեքիաթ-հեքիաթ պապս»

Եթե վերոնշյալ սյուժեներում շղթայական պատումը զարգանում է մեկը մեկին ոչնչացնող կամ վնասող օղակներով, ապա այլ սյուժեներում շղթան արարման և ձեռքբերումների բնույթ է կրում: Ընդհանրապես, աշխարհի իրերի ու երևույթների փոխկապակցվածության և փոխայամանավորվածության մասին հնուց ի վեր բազմաթիվ ու բազմատեսակ տեքստեր են ստեղծվել: Ահա մի հատված հին հնդկական պոեզիայի մի բնագրից, որտեղ սերմից սկսվող փոխկապակցման շղթան ի վերջո արարում է մարդուն.

Այժմ սերմերի ծնունդի մասին:

Պրաջապատիի սերմը աստվածներն են:

Աստվածների սերմը՝ անձրևը:

Անձրևի սերմը խոտերն են:

Խոտերի սերմը՝ սնունդը:

Մենդի սերմը սերմն է²¹:

Արարման այս շղթայի յուրաքանչյուր օղակ նաև յուրօրինակ զոհ է: Դա սննդային շղթայի բնական շարունակականությունն է: Յուրաքանչյուր նախորդը սնվում-արարվում է հաջորդով, յուրաքանչյուրը սերմ սնունդ է դառնում մյուսի համար:

Եթե քննարկված կուտակային շղթաներում մեկը մյուսին ուտելու-ոչնչացնելու, մեկը մյուսից արարվելու կառույցը զարգանում է ինքնաբերաբար, ապա մյուս սյուժեներում, որոնց կանդրադառնանք ստորև, առկա է միջնորդ կերպարը, որի կատարած փոխանակումների ճանապարհով է զարգանում նույնաբնույթ շղթան: Այսպիսիք են Թումանյանի մշակած «Օիտը», «Պոչատ աղվեսը», որոնցում մի դեպքում ծիտը, մյուս դեպքում աղվեսը, որպես միջնորդ փոխանակություններ կատարելով, կայացնում են շղթայական այս կառույցը: Փոխանակություն կատարող այս կերպարը որոշակիորեն օժտված է տրիքստերային հատկանիշներով: Սա հատկապես ակնհայտ է «Օիտը» հեքիաթի ժողովրդական այն տարբերակներում, որոնցում ծիտը, ինչ-որ բան տալով, թվում է բարություն է անում, սակայն վերադարձին փոխարենը ինչ-որ բան խլում է իր տվածի փոխարեն, որոշ տարբերակներում նույնիսկ վնաս է հասցնում (օր.՝ հանում է աշուղի աչքը²²): Այսպիսի հակասականությունը՝ մարդկանց մշակութային օգուտ բերող, բայց նաև վնաս-

²⁰ Այս մասին տե՛ս **Фрейденберг О. М.** Поэтика сюжета и жанра, М., 1997, էջ 67-68: **Ն. Խ. Վարդանյան**, Խաչի իմաստաբանությունը հարսանեկան թագվորագովքերում, «Էջմիածին», 2014, Ը (օգոստոս), էջ 88-98:

²¹ «Հին արևելքի պոեզիա», Եր., 1982, ԵՊՀ հրատ., էջ 299:

²² Տե՛ս **Մ. Հայկունի**, Կենդանական վեպեր. ժողովրդական առակներ, Վաղարշապատ, 1907, Մասն Ա, «Աշղ Այիլոր», էջ 17:

սող, հատուկ է առասպելական տրիքստերային կերպարներին²³:

«Պոչատ աղվեսը». Թումանյանի մշակմամբ հանրահայտ հեքիաթում փոխանակություններ կատարող կերպարին տրիքստերայնությունն այնքան էլ բնորոշ չէ: Այստեղ փոխանակությունների շղթայի նպատակը կաթ ձեռք բերելն է. աղվեսը պետք է պառավին կաթ բերի, որ ստանա իր պոչը: Մնունդ հայթայթելու ճանապարհին այստեղ ևս շղթայական կառույցով է զարգանում. կաթի դիմաց կովը խոտ է ուզում, խոտի դիմաց արտը ջուր է ուզում, ջրի դիմաց ջրհորը կուժ է ուզում (ժող. տարբերակում ջրհորն աղջիկ է ուզում²⁴), կուժի դիմաց աղջիկը հուլունք է ուզում, որը տալիս է չարչուն, և կայանում է փոխանակությունների շղթան: «Պոչատ աղվեսի» Հայկունու գրառած տարբերակում կուտակային շղթան ավելի է մեծանում. այստեղ շղթան հասնում է մինչև հատիկը (կուտը). չարչին ձու է ուզում, հավը կուտ է ուզում, որը տալիս է կալվորը²⁵: Մի դեպքում սկսվում («Էս էն է» հյուսվածքում), մյուս դեպքում վերջանում է սերմնահատիկով²⁶:

«Ծիտը» հեքիաթում փոխանակությունների շղթան ներառում է ոչ միայն սննդային բաղադրիչներ. փշի դիմաց՝ լոշ, լոշի դիմաց՝ գառ, գառան դիմաց՝ հարս, հարսի դիմաց՝ սազ ստացող ծիտը ի վերջո կորստի և ձեռքբերումների ճանապարհով աշուղ է դառնում և պատմում իր պատմությունը՝ կուտակային երգի միջոցով.

Ծընգը, մընգը,
Փուշիկ տվի, լոշիկ առա,
Լոշիկ տվի, գառնիկ առա,
Գառնիկ տվի, հարսիկ առա,
Հարսիկ տվի, սազիկ առա,
Սազիկ առա, աշուղ դառա...²⁷

²³ Փոխանակություններ կատարող կերպարի տրիքստերային էությունն առավել ակնհայտ է «Ծիտը» հեքիաթի այն տարբերակներում, որոնցում թոչնի փոխարեն հանդես է գալիս աղվեսը: Հեքիաթի իմերթական տարբերակում աղվեսը, որ հարսանքավորներին է տալիս եզր, գիշերը գաղտնի մորթում է եզր, դանակը դնում հարսի գրպանը: Առավոտյան «գտնում է հանցավորին» և փախցնում, տանում (տե՛ս Сборник материалов для описания местностей и племен Кавказа, 1904, № 33, «Проказы лисы», էջ 63-65):

²⁴ Հստ երևույթին ժողովրդական տարբերակը պահպանել է ջրին (ջրարգել վիշապին) աղջիկ գոհաբերելու սովորույթի հիշողությունները: Թումանյանն իր մշակման մեջ փոխել է երեխային անհասկանալի այս մոտիվը: Այստեղ ջուրը կուժ է ուզում, որն աղջկա մոտ է:

²⁵ Տե՛ս **Ս. Հայկունի**, Կենդանական վեպեր. ժողովրդական առակներ, Մասն Ա, «Աղուէս ու պառա», էջ 9:

²⁶ Ամերիկացի մարդաբան Ջեյմս Սկոտը իր ուսումնասիրություններից մեկում պետության կազմավորումը քոչվոր կյանքից նստակյացին անցնելը, կապում է ցորենի մշակման սկզբնավորման հետ (տե՛ս **Скотт Дж.** Против зерна: Глубинная история древнейших государств, М., «Дело», 2020): Ուշագրավ է, որ քննարկվող կառույցներում էլ պատումների մի մասը ցորենով է սկսվում և կամ ցորենով վերջանում՝ որպես տան բարեկեցության սկիզբ և որպես ձեռքբերումների շղթայի առաջին կամ վերջին կարևորագույն օղակ:

²⁷ **Հովհ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., «Գիտություն», 1994, էջ 177:

Ժողովրդական հեքիաթի այս երգային հատվածը ասվել է նաև հեքիաթից անկախ՝ որպես մանկական խաղերգ.

Փուշը տվի, լոշը առա,
Լոշը տվի օխչարն առա,
Օխչար տվի, չոնգուրն առա,
Ցնգլի, ցնգլի,
Իս հաստ մանեմ, դուն բարակ²⁸:

Անվերջ կրկնվող այս կուտակային հյուսվածքը, եթե նույնիսկ չափածոյի տեսք չի ընդունում, ինչպես, օրինակ, «Պոչատ աղվեսում», միննույնն է, իր կրկնությունների առատությամբ, իսկ թումանյանական մշակման մեջ նաև հանճարեղ գրչի չտեսնված գորությամբ որոշակի երաժշտականություն ու հանգավորում է ստանում, որը երեխաների համար պատումը դարձնում է գրավիչ և դյուրըմբռնելի. «-Աղբյուր, աղբյուր, ջո՛ւր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա. խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա. կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներինս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՛րտեղ էիր»²⁹:

Շղթայական փոխանակության այս սկզբունքը տեսնում ենք նաև «Հեքիաթ, հեքիաթ պապս»՝ հայկական ժողովրդական բանահյուսությանը բնորոշ չափածո սկսվածքում: Եթե հեքիաթասացությունը մի յուրօրինակ ծես համարենք, ապա այս ծեսի պատումն անշուշտ հեքիաթի չափածո սկսվածքը կլինի, որը հետագայում առանձնացել է հեքիաթից և ինքնուրույն կյանք ստացել՝ որպես մանկական խաղերգ կամ որպես երգիծական երգ³⁰:

Այստեղ էլ, ինչպես «Էս էն է» փոխադրության մեջ, ամեն ինչ սկսվում է հատիկից՝ բրինձ, կուտ: Հեքիաթասաց պապի պատումով զինված, նախշուն ձին նստած՝ ասացողը մեկնում է Երևան՝ հավերի համար կուտ կամ բրինձ բերելու: Յուրօրինակ փոխանակման շղթան ամեն օղակում նոր ձեռքբերմամբ է զարգանում.

Հեքիա թ, հեքիա թ պապս,
Զաշոք քուռակ տակս,
Հեծնեմ էրթամ Երևան,
Գինին խմեմ գերանամ,
Հավերուս չալթուկ բերեմ,
Հավերս ինձի հավկիթ ածեն,
Հավկիթը տանեմ դարբնին տամ,
Դարբինը ինձ տանակ տա,
Տանակը տանեմ չոբնին տամ,
Չոբանն ինձի գառ տա,

²⁸ Գ. Տեր-Աղեքսանդրեան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885, էջ 33:

²⁹ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, էջ 212:

³⁰ Տարբերակները տե՛ս Ռ. Գրիգորյան, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1970, էջ 262-269:

Գառը տանեմ աստծուն տամ,
Աստված ինձի աղբեր տա...³¹

Յորենով սկսվող տարբերակը հացի արարման շղթայական պատումն է զարգացնում.

Աստված ինձի ցորեն տա,
Յորենը տանեմ ջաղցին տամ,
Ջաղացը ինձի այլուր տա,
Այլուրը տանեմ ջրին տամ,
Ջուրը ինձի խմոր տա,
Խմորը տանեմ թնրին տամ, թնդիրն ինձի հաց տա...³²

Չափածոյի տարբերակները բազմազան են և ընդգրկում են հարուստ շղթայական մոտիվաշարեր. բրնձի դիմաց՝ ձու, ձվի դիմաց՝ դանակ, դանակի դիմաց՝ գառ, գառան դիմաց՝ ախպեր: Փոխանակությունների այս շղթան ներառում է երկրագործական, կենդանական և մարդկային դրսևորումներ: Նրանց միավորողը ծնելու, ստեղծելու, արարելու հատկանիշն է. արտը՝ խոտ, ցորեն, բրինձ, կուտ է տալիս, հավը՝ ձու, կովը՝ կաթ: Մարդկային կերպավորումներում ևս ակնհայտ է արարող, ստեղծող հատկանիշը՝ որոշակի առասպելական ըմբռնումներով պայմանավորված. կալվորը, հացթուխը, հովիվը, դարբինը կյանքի ծանրությունը կրող և արարող կենսական այն կերպարներն են, առանց որոնց չի կարող ապրել մարդը: Թերևս միակ կերպարը, որ ստեղծող չէ, չարչին է, և սա է հենց այն կետը, երբ փոխանակությունը առևտրի է վերածվում՝ փոխանակության երևույթի պատմական զարգացման վերջին փուլը:

Հարսն ու փեսան կուտակային շղթայում

Կուտակային այս հյուսվածքներում որպես փոխանակող կողմ է հանդես գալիս նաև աստված: «Հեքիաթ-հեքիաթ պապս» չափածոյում վերջին ընծան՝ գառը, աստծուն է տրվում՝ փոխարենը «ախպեր» կամ ցորեն ստանալով: Սա ակնհայտորեն մատաղի տրամաբանությունն է, որը ևս մի յուրօրինակ փոխանակություն է աստծո հետ: Նման մի փոխանակության օրինակ է մեզ տալիս նաև «Ծիտը» կուտակային հեքիաթը, որտեղ գառան դիմաց ծիտը հարս է ստանում: Հարսանիքում գառան գոհաբերությունը նորապսակների կենսաստեղծությանն է ուղղված. «Գացեք-տեսեք»-ում, ինչպես տեսանք վերը, Աստված տանում է փեսային: Հարսն էլ, փեսան էլ հարսանիքում վերածնվող, անցումային ծես ապրող կերպարներ են: Գառան և հարսի փոխանակության այս մոտիվը տեսնում ենք նաև հայոց հարսանեկան երգերում, որոնցում հարսանիքն էլ որպես մի յուրօրինակ առևտուր է ներկայացվում.

³¹ Ռ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 264:

³² Նույն տեղում:

Ես խմել եմ, գառ եմ առել,
Գառս տվել, ձագ եմ առել.
Առևտուրս շնորհավոր³³:

Անցումային ծես ապրող, իր տարածքում մեռնող և փեսայի տարածքում վերածնվող հարսի կերպարը և հարսի փոխարեն ասածուն գառ նվիրաբերելը լիովին համահունչ են հնագույն ծիսական ըմբռնումներին³⁴: Ծիտը առասպելաբանության մեջ երկու աշխարհների բանբերն է, այսաշխարհի և այլաշխարհի կապն ապահովողը. պատահական չէ, որ հեքիաթի իմերթական տարբերակում ծիտը յոթը սարի հետևից է գալիս³⁵, իսկ դա հեքիաթի հայտնի այլաշխարհքն է:

Թերևս մնում է պարզել միայն, թե ինչու են հիմնականում սննդային շղթա ներկայացնող այս կառույցներում հայտնվում հարսի, փեսայի և ամուսնության մոտիվները: Երկրագործական և հարսանեկան երգերի ընդհանրության մասին գիտական գրականության մեջ քանիցս խոսվել է: Պրոպը նկատում է, որ հարսանիք անելը անհրաժեշտ է համարվել հողի պտղաբույությունն ապահովելու նպատակով³⁶: Հարսանեկան և երկրագործական երգերի առնչություններին են անդրադարձել Ի. Ի. Ջեմցովսկին³⁷, Լ. Լ. Իվաշնևան³⁸: Սննդային արարման և ոչնչացման շղթային բնորոշ մոտիվներով զարգացող վերոնշյալ կառույցներում ակնհայտ է երկրագործական շերտը արտի, ցորենի ու կալվորի մոտիվներում, որոնցով հաճախ սկսվում կամ վերջանում է կառույցը: Շղթայական այս կառույցում հարսանեկան մոտիվի առկայությունը պայմանավորված է հատկապես երկրագործական և հարսանեկան ծիսական բնագրերի ընդհանուր մոտիվաշարերով, որոնք աղերսվում են աճի, բեղմնավորման և պտղաբերության գաղափարներին: Սննդի ընդունման, ծիսական սնման և ամուսնության ծեսի իմաստաբանական ընդհանրությունների վերաբերյալ ուշագրավ վերլուծություն է կատարել Օ. Ֆրեյդենբերգը: Ըստ այդմ՝ նախնական մտածողության համաձայն՝ և՛ ծիսական սնման, և՛ ամուսնության (ոչ միայն մարդկային ամուսնության, այլ ծառերի, երկնային մարմինների) հիմքում ընկած է

³³ Գ. Սահակյան, Ռ. Հովհաննիսյան, Խաչը՝ թիկունքիս, Յոթվերքը՝ սրտիս // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, 2008, № 11, էջ 7-16:

³⁴ Հարսի՝ որպես մեռնող-հառնողի մասին տե՛ս Ն. Վարդանյան, Հարսանեկան լացերգերի ծիսական իմաստաբանությունը. մահվան այլաբանական խորհրդապատկերների քննություն, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2020, № 3 (660), էջ 96-108:

³⁵ Տե՛ս Сборник материалов для описания местностей и племен Кавказа, 1903, № 32, часть 2, էջ 135-137:

³⁶ Տե՛ս Пропп В. Я. Русские аграрные праздники (Опыт историко-этнографического исследования), Л., 1963, էջ 54:

³⁷ Տե՛ս Земцовский И. И. К проблеме взаимосвязи календарной и свадебной обрядности славян // Фольклор и этнография. Обряды и обрядовый фольклор, Л., 1974, էջ 147-154:

³⁸ Տե՛ս Ивашева Л. Л. О взаимосвязи календарной и свадебной поэзии // Русский фольклор XVI, Историческая жизнь народной поэзии, Л., 1976, էջ 191-199:

տարեպտույտի՝ նոր տարվա, նոր կյանքի արարման, մահվան և վերածննդի գաղափարը³⁹: Այսպիսով, ամուսնությունն ու աճի խորհրդաբանությամբ հանդես եկող հարսի ու փեսայի կերպարները այս սյուժեներում կյանքի շարունակականության, կենսանորոգման անհրաժեշտ օղակներից են, որոնցով ամբողջանում է կենսաշրջանի կուտակային կառույցը:

Ամփոփում

Քննությունը ցույց է տալիս, որ տարբեր ժանրաձևերում, չափածոյի և արձակի տարբեր դրսևորումներով և գեղարվեստական արտահայտման երգիծական, արկածային արտահայտումներով ի հայտ եկող կուտակային այս կառույցները, որ այսօր զվարճալի մտավարժական իսաղ են հիշեցնում, պահպանել են մարդու վաղ մտածողության ուշագրավ դրսևորումներ՝ կենսապտույտի, կյանքի շարունակականության, աննդային արարման և ոչնչացման շղթայի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, ինչպես ծիտը, որ վերջում աշուղ-հեքիաթասաց դառնալով՝ պատմում է հեքիաթը (Հայկունու գրառած տարբերակում այս երգով «հեքիաթասաց» ծիտը սկսում է դրամ վաստակել («Օտի վուտի փուշը»⁴⁰), այնպես էլ հեքիաթասաց պապը կյանքի զարգացման փոխկապակցված այս շղթայի պատումի կրողն է դառնում: Կուտակային այս սյուժեները ամբողջացնում են կենսական շրջանակը՝ ցորենից սկսվող, փոխկապակցված, մեկը մեկից սերող և մյուսով սնվող բաղադրիչների անքակտելիությամբ զարգացող. դա ըստ էության շատ նման է հեքիաթի կառույցին ընդհանրապես, որտեղ հերոսի ճանապարհի շրջանակն էլ յուրօրինակ փոխանակությունների մի շղթա է՝ գոհողության և ձեռքբերման, որի ավարտին էլ գրեթե միշտ հարսի ձեռքբերումն ու ամուսնությունն է՝ կյանքի շարունակականությունն ապահովող:

НВАРД ВАРДАНЯН – Некоторые параллели между кумулятивными сказками и ритуальными песнями. – Кумулятивные или цепевидные сказки относятся к наименее изученным видам армянского фольклора. Как поджанр сказок - кумулятивные сказки выделяются не столько по содержанию, сколько по структурным особенностям повествования. Исходной является накапливающаяся с определенными устойчивыми повторениями структура, включающая в себя новый компонент на каждом цикле сюжета. Подобная кумулятивная структура характерна и для композиции некоторых народных обрядовых песен, где повторение мотивов предполагает генеалогическую общность сюжетов.

В статье интертекстуальным методом рассматривается ряд кумулятивных текстов сказок и песен. В рассматриваемом материале мы также написали о высокохудожественных обработках кумулятивных сюжетов Оганеса Туманяна, рассматривая их параллельно с фольклорными версиями и другими образцами обрядового фольклора. В статье изучается принцип развития кумулятивной цепи с

³⁹ Տե՛ս Փրէյճենբերգ Օ. Մ., նշվ. աշխ., էջ 53-82:

⁴⁰ Տե՛ս Գ. Տեր-Աղեքսանդրեան, նշվ. աշխ., էջ 412-413:

последовательными звеньями рождения и смерти, творения и распада, принцип формирования цепи, основанной на логике жизненного цикла, которая также является главной идеей новогоднего и свадебного обрядового фольклора. Именно это определяет генеалогическую общность кумулятивных сказок с новогодними и свадебными обрядовыми текстами и выявляет обилие мотивов, связанных с невестой, женихом и свадьбой в рассматриваемых кумулятивных структурах.

Ключевые слова: *кумулятивная сказка, обрядовая песня, «Вот оно», «Идите-смотрите», «Воробей», «Бесхвостая лиса», «Сказка-сказка, это моя бабушка», цепная структура, творение, разрушение, жених и невеста*

NVARD VARDANYAN – *Some Parallels Between Cumulative Tales and Ritual Songs.* – Cumulative or chain tales are among the least studied types of Armenian folklore. As a subgenre of fairy tales, cumulative tales stand out not so much in content as in structural features of the narrative. The initial structure is a structure accumulating with certain stable repetitions, which includes a new component at each cycle of the plot. A similar cumulative structure is also characteristic of the composition of some folk ritual songs, where the repetition of motives suggests a genealogical commonality of plots.

The article examines a number of cumulative texts of fairy tales and songs using the intertextual method. In the studied material we have also included highly artistic adaptations of cumulative plots by Hovhannes Tumanyan, examining them among the folklore versions and other examples of ritual folklore. The article studies the principle of the development of a cumulative chain with successive links of birth and death, creation and decay, the principle of the formation of a chain based on the logic of the life cycle, which is also the main idea of New Year and wedding ritual folklore. This is what determines the genealogical commonality of cumulative tales with New Year and wedding ritual texts and reveals the abundance of motives associated with the bride, groom and wedding in the cumulative structures under consideration.

Key words: *cumulative tale, ritual song, “Here it is”, “Come and see”, “Sparrow”, “Tailless Fox”, “Fairy tale, this is my grandfather”, chain structure, creation, destruction, bride and groom*